ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ԾԱԾԿԱԳՐՈՎԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 01-ը սեպտեմբերի 2017թ
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,
գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ Ավիացիայի վարչության ԱՏՈՒ և ավիացիոն սպառազինության բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Համբարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ, քիծ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյանը,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյանը:
Գնումները համակարգող՝
Գնումները համակարգող նշանակել ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա.Մաղաքյանին

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակից հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 Առաջին տեղ զբաղեցրած «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6»** ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

Ուսումնասիրելով «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հանձնաժողովի արձանագրեց հետևյալ անհամապատասխանությունը՝ Հավելված N 6.1-ում նշված չէ ապրանքների համար սահմանվող երաշխիքի և արտադրման տարեթվերի մասին տվյալները, որոնց ներկայացումը նախատեսված է ընթացակարգի հրավերով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկեց մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակիցը սահմանված ժամկետում շտկեցին առկա անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Լեմուր» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները և առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Կարապետյան
Գնահատող՝	Ա. Համբարյան
Գնահատող՝	Ռ. Զաղոյան
Գնահատող՝	Հ. Բարսեղյան
Գնահատող՝	Ն. Արշակյան
Գնումները համակարգող՝	Ա. Մաղաքյան